# Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔԸ

*Վերադառնալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը շնորհակալական իր խոսքը հղեց հավատավոր հայութեանն ի Հայաստան, ի Արցախ և ի Սկյուռս աշխարհի, որում ասվում է.*

*«Սիրելի վաւակունք Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ,*

*Այսօր առաւօտ 22 Օգոստոսին Աստուծոյ կամքով վերադարձայ ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որտեղից բացակայել էի անցեալ չորս ամիսներին, հիւանդութեան պատճառով և դարմանումի համար մեկնած լինելով ի Մեծն Բրիտանիա և ապա Նիւ Եորք, ի Միացեալ Նահանգներ Ամերիկայի, որտեղ շողարձակային յատուկ դարմանումի ենթարկուեցայ մասնագէտ բժիշկների կողմից: Դարմանումի ընթացքին մամլոյ երկու հաղորդագրութիւններով մեր ժողովուրդը տեղեակ պահուեց առողջական կացութեան և դարմանումի մասին:*

*Այժմ, երբ վերադարձել եմ իմ հոգևոր տունը ի Ս. Էջմիածին, գոհաբանական աղօթք եմ մատուցում առ Ամենաբարին Աստուած, որ ինձ կօրացրեց և հիւանդութիւնը փարատեց: Բնականօրէն, դեռ բաւական ժամանակի կը կարօտի ապաքինման կամ կապդուրման ընթացքը՝ վերջնականօրէն յաղթահարելու համար հիւանդութիւնը: Վստահ եմ որ Աստուծոյ կօրութեամբ և բժիշկների այլայուրջ խնամատարութեամբ կը վերագտնեմ իմ նախկին առողջութիւնը և առաւել արդիւնաւորութեամբ առաջ կը տանիմ ծանրագոյն պարտականութիւններս ի սպասաւորութիւն մեր Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու, մեր սիրեցեալ ժողովուրդին և նուիրական հայրենիքին:*

*Սրտի պարտք եմ կրում ի Մայր Աթոռ ժամանմանս այս առաջին պահին խոր և ջերմ շնորհակալութիւնները յայտնել Հայաստանի, Լոնտոնի և յատկապէս Նիւ Եորքի բոլոր այն բժիշկներին՝ որոնք իրենց մասնագիտութեան և բարեացակամ վերաբերումի բարձրագոյն աստիճանով կատարեցին հարկ եղած քննութիւնները և դարմանումները, մասնաւորապէս Տքթ. Լու Հարիսընին և Տքթ. Ռոյ Սէշընսին և իրենց օգնականներին:*

*Շնորհակալութեան և գնահատանքի իմ խօսքը Ամերիկահայոց Արևելեան Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արքեպիսկոպոս Պարսամեանին և Թեմական Խորհուրդին ու Առաջնորդարանի պաշտօնէութեան, որոնք ամբողջական և անձնուէր աշխատանքով կօրաւիգ կանգնեցին ինձ այս չորս ամիսների ընթացքում, գրեթէ ամենօրեայ հոգածութեամբ:*

*Յատուկ շնորհակալութիւններս բոլոր այն բժիշկներին և անհատ բարեկամներին՝ որոնք իրենց գերագոյն կարելին ի գործ դրին ինձ հետ*

*լինելով անձամբ և իրենց բժշկական խնամքը ու բարեկամական հոգածությունը ընծայելով անվերապահ և ամբողջանուէր սիրով:*

*Շնորհակալության և գնահատանքի խօսքս ուղղում եմ բոլոր այս անձերին, որոնք Մայր Հայաստանից, Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, բալում երկրներից, Միջին Արևելքից, Ծայրագոյն Արևելքից, Եւրոպայից, Միացեալ Նահանգներից, Գանատայից, Հարաւային Ամերիկայից, անձնական այցելությամբ, նամակներով, հեռագրերով, ծաղկեփունջերով, հեռաձայնային խօսակցությամբ իրենց սէրն ու բարեկամությունը արտայայտեցին աղօթքով և բարեմաղթանքներով՝ Հայաստանի Հանրապետության Վսեմաշուք Նախագահին և կառավարության անդամներին, Հայաստանեայց Եկեղեցու Նուիրապետական Աթոռների գահակալներին, Թեմական Առաջնորդներին, Հայոց Հանրապետության դեսպաններին Լոնտոնում, Միացեալ Սկզբերի Կազմակերպությունում (Նիւ Եորք) և Ուաշինգտոնում, հոգևորականաց դասուն, համայնքային կազմակերպություններին և անհատ բարեկամներին, ներառեալ նաև ոչ հայ եկեղեցական հոգևոր պետեր և միջազգային եկեղեցական և բարեսիրական կազմակերպություններ: Շնորհակալություններս նաև բոլոր նրանց՝ հաւատացեալ մեր ժողովրդի կաւակներին, ովքեր լուռ աղօթեցին, առանց կարենալ անձամբ հաղորդակցելու ինձ հետ:*

*Աղօթում եմ ի խորոց սրտի որ Աստուած ձեզանից հեռացնի հիւանդությունը, առողջությամբ օժտի բոլորիդ և երջանկությամբ ծաղկեցնի ձեր կեանքերը: Թող ներողամիտ լինեն նրանք՝ որոնց նամակներին և հեռախօսներին անկարելի եղաւ անձամբ պատասխանել, անհանգստությանս հետևանքով: Թող իմ այս հրապարակային խօսքի մէջ գտնեն իրենց ամենի մաղթանքների իմ շնորհակալական զգացումները:*

*Սիրելիք.*

*Անցեալ չորս ամիսները անձնական ֆիզիքական առողջության տեսակէտից եղան դժուար, ծանր պահեր ինձ համար: Սոիթներ ունեցայ փորձառության լոյսի տակ անդրադառնալու առողջության առաջնահերթային կարևորության: Կեանքը թանկագին տուրք է Աստծուց մեզի ընծայուած: Զայն իմաստնօրէն և երջանկաբար ապրելու նախապայմաններից մէկն է, և հիմնականը՝ առողջությունը:*

*Ցանկանում եմ Ձեզ բոլորիդ լիագոյն և տևական առողջություն, որպէսզի կարենաք ձեր պարտաւորությունները լիովին կատարել, առատագոյն արդիւնաւէտությամբ, թէ՝ անհատական, թէ՝ ընտանեկան, թէ՝ եկեղեցական և թէ՝ ազգային համայնական մակարդակների վրայ:*

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:*

*ԳԱՐԵԳԻՆ Ա*
*ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ*

*22 Օգոստոս, 1998*
*Մայր Աթոռ Ս. Էջմիածին»:*